

19452



ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հակոբ Սիմիոյան
«21» 10 2024թ.



ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 223 - 24

Նախաձեռնող՝

«ՆՈՒՌ - ՀԵՐՄԱՆ» ՍՊԸ

Արմավիրի մարզ, Լուկաշեն բնակավայր, Անդրանիկի փողոց, 3-րդ շենք, բն. 17

Գործունեությունը՝

Արագածոտնի մարզի Լուկաշենի փուֆի հանքավայրի
վերջնական փակման ծրագիր

Նոր Ամանոս բնակավայր

Առդիր՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ
ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ № 223 - 24

«21» հոկտեմբերի 2024 թ.

Արագածոտնի մարզի Լուկաշենի տուֆի հանքավայրի վերջնական փակման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Նախաձեռնող՝	«ՆՈՒՌ - ՀԵՐՄԱՆ» ՍՊԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն, նախագծային փաստաթուղթ
Գործունեության տեսակը՝	«Բ» կատեգորիա
Գտնվելու վայր՝	Արագածոտնի մարզ, Աշտարակ համայնք, Նոր Ամանոս բնակավայր

Ներածական մաս. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության համաձայն՝ «ՆՈՒՌ - ՀԵՐՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից նախատեսվում է Արագածոտնի մարզի Լուկաշենի տուֆի հանքավայրից հայցվող տեղամասի վերջնական փակման աշխատանքներ: Աշխատանքների իրականացման համար հիմք է հանդիսացել ՀՀ «Ընդերքի մասին» օրենսգրքի 49-րդ հոդվածի 2-րդ մասի 6) կետի «ե» ենթակետով սահմանված՝ հանքավայրի շահագործման աշխատանքների ավարտից 2 տարի առաջ հանքի փակման վերջնական ծրագրի կազմման հաստատումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքի 12-րդ հոդվածի 4-րդ մասի 2) կետի «բ» ենթակետի համաձայն՝ նախատեսվող գործունեությունը հանդիսանում է «Բ» կատեգորիայի գործունեության տեսակ:

Հանքավայրից հայցվող տարածքի հողերը համայնքային են, N 0048478 վկայականով անշարժ գույքի նկատմամբ օգտագործման իրավունքով տրամադրված հողամասի գործառնական նշանակությունը՝ ընդերքօգտագործման է, հողամասի ընդհանուր մակերես կազմում է 6.4 հա, հանքավայրի հայցվող տեղամասի մակերեսը՝ 4.4հա:

Նկարագրական մաս. «ՆՈՒՌ - ՀԵՐՄԱՆ» ՍՊԸ-ի/ այսուհետ՝ Ընկերություն/ կողմից փորձաքննության ներկայացված Արագածոտնի մարզի Լուկաշենի տուֆի հանքավայրից հայցվող տեղամասը գտնվում է Աշտարակ համայնքի Նոր Ամանոս բնակավայրի վարչական տարածքում: Հանքավայրի հայցվող տեղամասի տարածքը տեղակայված է Արագած լեռան հարավային հարթավայրային տարածքում՝ 1040 մ բացարձակ բարձրության վրա և զբաղեցնում է մոտ 8 կմ² տարածք: Տարածքի ռելիեֆին բնորոշ են հրաբխաէրոզիոն ձևերը և մակերևույթի խիստ կտրտվածությունը: Հողերի վնասման տարողությունը համեմատաբար ցածր է, որը պայմանավորված է համառոտ նախաձեռնվող պարունակությամբ և թեթև կավավազային մեխանիկական կազմով:



Հանքավայրի շրջանում գետային համակարգը բացակայում է, ստորգետնյա ջրերի մակարդակը գտնվում է բավականին խորության վրա:

Բացահանքում սողանքային երևույթները բացակայում են : Ամենամոտ վայրը, որտեղ հանդիպում են սողանքային երևույթներ, գտնվում է հանքավայրից մոտ 15 կմ և ավելի հեռավորության վրա:

Հանքավայրի տարածքը հանդիսանում է ինտենսիվ տնտեսական յուրացման գոտի: Հանքավայրում, ինչպես նաև հարակից տարածքներում արդյունահանման աշխատանքներ են իրականացվում տարբեր կազմակերպությունների կողմից: Տարածքն ամբողջությամբ զուրկ է բուսական ծածկույթից, ՀՀ Կարմիր գրքերում գրանցված պահպանության ենթակա բուսատեսակներ և կենդանատեսակներ, բնության հատուկ պահպանվող տարածքներ, պատմամշակութային հուշարձաններ չկան: Հողի բերրի շերտը բուն բացահանքի տարածքում բացակայում է:

Լուկաշենի տուֆի հանքավայրի պաշարները հաստատվել են 1962 թվականի հունվարի 30-ի ՀԽՍՀ ՊՏՀ-ի թիվ 120 արձանագրությամբ՝ A+B+C1 կարգի 6486 հազ.մ³ ծավալով:

Ընկերության կողմից հանքավայրից հայցվող տարածքի արդյունահանման աշխատանքներն իրականացվել է ՀՀ օրենսդրությամբ սահմանված հետևյալ թույլտվությունների համաձայն.

- ՀՎ-Շ-13/123 ՀՀ Արդյունաբերության և առևտրի նախարարության կողմից 2000թ. դեկտեմբերի 1-ին տրված թույլտվության՝ Ընդերքի ռեսուրսային ներուժի /պոտենցիալի/ շահագործում մինչև 25 տարի ժամանակով տրամադրված ըստ կարգերի 10-C1 բլոկի 200000մ³ պաշարների՝ տարեկան արտադրողականությունը՝ 10000 մ³ տուֆի գանգված,
- Հայլեռտեխսկողության վարչության փորձաքննական հանձնաժողովի կողմից 2001թ. ապրիլի 4-ին տրված փորձաքննական եզրակացության,
- ՀՀ Բնապահպանության նախարարության «Պետական բնապահպանական փորձաքննություն» ՊՓԲԸ -ի կողմից 2001թ. ապրիլի 6-ին տրված ԲՓ-52 շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական եզրակացության,
- ՀՀ Էներգետիկայի և բնական պաշարների նախարարության կողմից 2012թ. դեկտեմբերի 28-ին ՇԱԹՎ-29/244/ տրված օգտակար հանածոյի արդյունահանման թույլտվության:

Հանքավայրից հայցվող տեղամասը բնութագրվում է հետևյալ կոորդինատներով (ARM WGS-84 կոորդինատային համակարգով).

1. X = 4453526 Y = 8416094,
2. X = 4453526 Y = 8416288,
3. X = 4453191 Y = 8416239,
4. X = 4453191 Y = 8416169,

S=4.4հա:

Բացահանքի ծառայման ժամկետը կազմում է 25 տարի:

Արդյունահանման աշխատանքները կատարվել են բաց եղանակով՝ ընդերկայնական, միակողմանի խորացմամբ, մակաբացման ապարների արտաքին լցակույտերի տեղափոխումով:

Համաձայն նախագծի՝ բացահանքում մակաբացման ապարների ծավալները կազմում են՝ 55040մ³, այդ թվում փխրուն ապարներ՝ 5950 մ³, ժայռային ապարներ՝ 49090մ³: Մակաբացման ապարները շահագործման ընթացքում տեղադրվել են



բացահանքից մինչև 1 կմ հյուսիս-արևմուտք հեռավորության վրա գտնվող՝ նախկին շահագործված տարածքում (այնտեղ նախկինում տեղադրվել են թափոններ): Լցակույտը բացահանքի հետ կապված է գոյություն ունեցող գրունտային ճանապարհով: Փխրուն մակաբացման ապարների մշակումն իրականացվել է բուլդոզեր-էքսկավատոր-ավտոինքնաթափ համակարգով, ժայռային մակաբացման ապարները մշակումը՝ ԿՐԱՊ-33 մակնիշի մեքենայով:

Հանքի փակման ծրագրով նախատեսվում է իրականացնել ստորև թվարկված միջոցառումները.

- հեռացնել տեխնիկա-տրանսպորտային միջոցները և արտադրական սարքավորումները՝ 10 օրյա ժամկետում,
- ապամոնտաժել ժամանակավոր կառույցները, դուրս բերել շինարարական աղբը և ջօգտագործված նյութերը,
- ապամոնտաժել ժամանակավոր տրամադրված էլեկտրամատակարարման համար էլեկտրահաղորդման գծերը,
- ավարտել ռեկուլտիվացման աշխատանքները, տարածքները կարգաբերել՝ 5 օրյա ժամկետում,
- հանքի փակման ծրագրով նախատեսված սոցիալական մեղմացման ծրագրի ամբողջական կատարում,
- հանքի փակման մշտադիտարկման պլանի իրագործում նախատեսված ժամանակաշրջանում:

Բացահանքի շահագործման ավարտից հետո Ընկերությունը պատրաստվում է իրականացնել շահագործման հետևանքով խախտված տարածքների տեխնիկական ռեկուլտիվացում՝ թեքությունների ձևավորման, էրոզիայի կանխման, բնակչության անվտանգության և առողջության ապահովման նպատակով: Նախագծով աշխատանքային և մարված հանքաստիճանների թեքությունները կազմում են 90°: Հանքի կողի թեքման անկյունը կազմում է 22°: Տեխնիկական ռեկուլտիվացման ժամանակ ներքին լցակույտում տեղադրված արտադրական թափոնները հնարավարինս կհարթեցվեն բուլդոզեր - էքսկավատորով: Հանքի թեքման անկյունները բերվելու են նախագծով նախատեսված 22°-ի, ինչը կբացառի սողանքների և փլվածքների հավանականությունը, ինչպես նաև վայրի և ընտանի կենդանիների անխորհնդոտ տեղաշարժը:

Համաձայն Կառավարության 2017 թվականի դեկտեմբերի 14-ի N 1643-Ն որոշման պահանջների, որպես խախտված հողերի ռեկուլտիվացման ուղղություն ընտրվել է շինարարական ուղղությունը՝ հաշվի առնելով բնահողի բացակայությունը և կենսաբանական ռեկուլտիվացիայի իրականացման անհնարինությունը: Բացահանքի տարածքը հետագայում կարող է օգտագործվել բնակավայրերի՝ ընդհանուր օգտագործման, արդյունաբերական, գծային, թափոնների ու մակաբացման ապարների լցակույտերի տեղադրման և այլ կառույցների շինարարական հրապարակների հիմնման համար:

Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքի հաշվարկը կատարվել է «Ռեկուլտիվացիոն աշխատանքների նախահաշվային արժեքների հաշվարկման և վերահաշվարկման կարգը սահմանելու մասին» Կառավարության 2021թ. օգոստոսի 18-ի N 1352-Ն որոշման համաձայն և կկազմի 1367770.3 ՀՀ դրամ:

Բացահանքի նախագծման փուլում բնապահպանական ոլորտի լիազոր մարմնի կողմից հաշվարկվել և Ընկերությանն է տրամադրվել ռեկուլտիվացիոն դրամագլխին հատկացվող ամենամյա վճարումների չափաքանակը, որը կազմել է 74.41 հազ. ՀՀ դրամ: Ընդհանուր դրամագլխին պետք է փոխանցել 1138070 ՀՀ դրամ:



Օգտակար հանածոների արդյունահանված տարածքի, արդյունահանման ընթացքում առաջացած արտադրական լցակույտերի տեղադիրքի և դրանց հարակից համայնքների բնակչության անվտանգության ու առողջության ապահովման նպատակով նախատեսվում են իրականացնել մշտադիտարկումներ՝ համաձայն Կառավարության 2013թ. հունվարի 10-ի N 22-Ն որոշման պահանջների:

Մշտադիտարկումների իրականացման դիտակետեր նախատեսվում է տեղադրել՝

> Օգտակար հանածոյի արդյունահանված տարածքում՝ բացահանքի կողերի դեֆորմացիաները (սողանքներ, փլուզումներ), ռեկուլտիվացիոն աշխատանքների արդյունքը գնահատելու նպատակով:

> Մշտադիտարկումների պարբերականությունը՝ տարեկան 1 անգամ:

> Մշտադիտարկման ձևը՝ տեղազննություն:

Մշտադիտարկումները իրականացվելու են 5 տարի տևողությամբ՝ մինչ երկրադինամիկ, հիդրոդինամիկ և շրջակա միջավայրի սահմանված թույլատրելի նորմերը բնութագրող ցուցանիշների կայունացումը:

Պատճառաբանական մաս. Փորձաքննության գործընթացում «Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» օրենքով սահմանված կարգով ազդակիր բնակավայրում (Նոր Ամանոս) անցկացվել է հանրային լսում, որի ընթացքում մասնակիցները համաձայնություն են տվել Լուկաշենի տուֆի հանքավայրից հայցվող տեղամասի վերջնական փակման ծրագրի վերաբերյալ: Ռեկուլտիվացիոն աշխատանքների տեխնիկական փուլում աշխատելու են 2 բանվոր: Հանքավայրի շահագործման աշխատանքների իրականացմանը ներգրավել են համայնքի բնակիչներին, ովքեր կներգրավվեն նաև փակման փուլերում:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են առողջապահության, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության և կադաստրի կոմիտեները, ինչպես նաև շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները: Ստացված դիտողությունները և առաջարկությունները հաշվի են առնվել Հաշվետվության լրամշակումներում:

Շահագործման աշխատանքների ավարտին բոլոր աշխատակիցներին կվճարվի ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրամական փոխհատուցում, որն աշխատակիցներին հնարավորություն կընձեռնի անցնել մասնագիտական վերավորակավորում՝ հնարավորություն ընձեռնելով աշխատանք գտնել ուրիշ ոլորտներում: Աշխատուժի սոցիալական մեղմացման նպատակով կտրամադրվի 450.0 հազ. ՀՀ դրամ աշխատողների վերավորակավորման և այլ ճյուղերում աշխատանքի տեղավորվելու համար:

Փորձաքննական պահանջներ

Անհրաժեշտ է ապահովել հետևյալ փորձաքննական պահանջների կատարումը.

- Փակման աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությամբ ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական նորմերի պահպանմանը:

- Խստորեն հետևել «Մթնոլորտային օդի պահպանության մասին» օրենքի 10-րդ հոդվածի 1-րդ կետի պահանջներին, ինչպես նաև գործունեության անվտանգության և առողջության պահպանման նպատակով:



միջավայրի պահպանությանն ուղղված այլ նորմատիվ իրավական ակտերի պահանջներին:

- Նախատեսվող գործունեության իրականացման ընթացքում պահպանել քաղաքաշինական, արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և պահանջները:

ԵԶՐԱՓՈՒԿՆԵՐ

«ՆՈՒՌ - ՀԵՐՄԱՆ» ՍՊԸ-ի կողմից Արագածոտնի մարզի Լուկաշենի տուֆի հանքավայրի վերջնական փակման ծրագրի շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվությանը տրվում է դրական եզրակացություն՝ վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրեն՝



Էնաչիկ Մարտիրոսյան

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի առաջատար մասնագետ՝

[Handwritten signature]

Ռուզան Մակինյան